ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. մայիսի 24-27-ը Բելառուսի Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անուն, ազգանունը՝ Կարեն Ալավերդյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի հաշվապահության, աուդիտի և ոչ ֆինանսական ոլորտի մեթոդաբանության վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ Բելառուսի Հանրապետություն, ք. Մինսկ, 2017թ. մայիսի 24-27

4. Հրավիրող կողմը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Մասնակցություն «Եվրասիական տնտեսական միության տարածքում աուդիտորական գործունեության մասին» համաձայնագրի նախագծի մշակման աշխատանքներ իրականացնող աշխատանքային խմբի հերթական նիստին:

6. Քննարկված թեմաները՝

«Եվրասիական տնտեսական միության տարածքում աուդիտորական գործունեության մասին» համաձայնագրի նախագիծ

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

- Համաձայնագրի նախագծի վերաբերյալ ԵՏՄ անդամ երկրների աուդիտորական գործունեությունը կարգավորող մարմինների կողմից ներկայացված առաջարկությունների քննարկում
- Համաձայնագրի նախագծի վերաբերյալ ԵՏՀ ձեռնարկատիրական գործունեության զարգացման դեպարտամենտի կողմից ներկայացված առաջարկությունների քննարկում
- Համաձայնագրի նախագծի վերաբերյալ ԵՏՄ անդամ երկրների աուդիտի մասնագիտացված կառույցների կողմից ներկայացված առաջարկությունների քննարկում

- Համաձայնագրի նախագծի որոշ հոդվածների վերաբերյալ ԵՏՄ անդամ երկրների միջև առկա տարբեր դիրքորոշումների քննարկում ու համաձայնեցում:

8. Հանդիպման արդյունքները և առաջարկությունները

Հանդիպման ընթացքում ներկայացրել եմ Համաձայնագրի նախագծի վերաբերյալ ՀՀ ֆինասների նախարարության դիրքորոշումը, այդ թվում նաև՝ որոշ հոդվածների վերաբերյալ անհամաձայնությունների կամ տարակարծությունների հիմնավորումները: Որոշում է կայացվել առաջարկել անդամ-պետություններին ևս մեկ անգամ քննարկել չհամաձայնեցված հոդվածները, միաժամանակ ներկայացնել աուդիտի որակի հսկողության և աուդիտորական կազմակերպությունների նկատմամբ վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու մեխանիզմները՝ դրանք հաջորդ նիստի ընթացքում քննարկելու նպատակով:

9. Գործուղվողը

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի հաշվապահության, աուդիտի և ոչ ֆինանսական ոլորտի մեթոդաբանության վարչության պետ Կարեն Ալավերդյան:

10. Ստորագրությունը, ամսաթիվը **01.06.2017թ.**